ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 2(52), 31 մարտի, 2023թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

ՀՀ ՆԳՆ ոտիկանության պետ-ՆԳ Նախարարի տեղակալ Ա. Հովհաննիսյանի հրամաններով պարգևատրվել են՝

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի ուսումնական ասիստենտ, ոստիկանության կապիտան Անի Անդրանիկի Կիրակոսյանը 2022թ. օպերատիվ ծառայողական գործունեության ընթացքում բարձր ցուցանիշներ ապահովելու, ծառայողական պարտականությունները բարեխղճորեն և բարձր պատասխանատվությամբ կատարելու համար 06.03.2023 թ. թիվ 99-Ա հրամանով՝ «Ոստիկանությունում գերազանց ծառայության համար» կրծքանշանով:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի տեսուչ, ոստիկանության կապիտան Իզաբելա Արամայիսի Նալբանդյանը երկարամյա ծառայության, ծառայողական պարտականությունները բարեխղճորեն և բարձր պատասխանատվությամբ կատարելու համար 15.03.2023 թ. թիվ 316-Ա հրամանով՝ «Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» 2-րդ աստիճանի մեդալով:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս, ոստիկանության կապիտան Գեղեցիկ Մարատի Վարդանյանին 15.03.2023 թ. թիվ 551-Ա հրամանով շնորհվել է «Ոստիկանության մայոր» հերթական կոչումը:

Շնորհավորում ենք ու մաղթում նորանոր բարձունքներ, հայրենիքին ծառայելու գործում խաղաղ ու անվտանգ ճանապարհ:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ԵՎՐՈՊՈԼՈՒՄ

Մարտի 14-ին Հաագա քաղաքում գտնվող Եվրոպոլի կենտրոնակայանում տեղի ունեցավ ԵՄ իրավապահ մարմինների վերապատրաստման գործակալության (CEPOL) Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վերապատրաստում և գործառնական համագործակցություն (TOPCOP) տարածաշրջանային ծրագրի 3-րդ բաղադրիչի (Տարածաշրջանային սպառնալիքների գնահատում և հատուկ աջակցություն) շրջանակում նախատեսված հերթական վերլուծական դասընթացը, որին մասնակցում էին Հայաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի, Վրաստանի և Ադրբեջանի՝ ծրագրի վերլուծության գծով պատասխանատուները: ՀՀ ոստիկանության կրթահամալիրից մասնակցում էր ուսումնամեթոդական և զարգացման վարչության միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Կարինե Սաֆարյանը:

Դասընթացի նպատակն էր մասնակիցներին ծանոթացնել ծանր և կազմակերպված հանցավորության սպառնալիքների գնահատման զեկույցի համար հավաքագրված քանակական և որակական տվյալների վերլուծության հիմնական տեխնիկաներին և առցանց տիրույթում հասանելի ծրագրերին:

Եվրոպոլի վերլուծաբանը կոնկրետ օրինակներով և կարճ հոլովակների ցուցադրմամբ հանգամանորեն ներկայացրեց տվյալներ՝ վերլուծելու Ishikawa, 5W1H, SWOT Analysis և PESTEL Analysis տեխնիկաները, ինչին հետևեցին խմբային վարժություններ:

Ներկայացվեցին նաև զեկույցի տեխնիկական կառուցվածքին և տեքստին առնչվող պահանջները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

2023 թվականի մարտի 24-ին Կրթահամալիրի քոլեջի լեզուների ամբիոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Կրթական տեխնոլոգիաները՝ որպես մասնագիտական կրթության որակի բարձրացման միջոց» միջազգային գիտամեթոդական համաժողովը, որին մասնակցում էր ՌԴ Վոլգոգրադ, Ռոստով, Օմսկ, Կազան քաղաքների, Ուզբեկստանի Հանրապետության, Ղրիմի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության իրավաբանական և ոստիկանական առաջատար կրթական հաստատությունների ավելի քան 30 մասնակից:

Գիտաժողովին ներկա էին ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության գնդապետ Մ. Մարկոսյանը, գիտական աշխատանքների և կրթության որակի ապահովման բաժնի պետ, ոստիկանության կապիտան Տ. Խաչատրյանը, միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Գ. Դավթյանը, Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմը, լեզուների ամբիոնի դասավանդողները և ուսումնաօժանդակ կազմը:

Ողջույնի խոսքով մասնակիցներին դիմեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ Մ. Մարկոսյանը, ով անդրադարձավ համաժողովի կարևորությանը, որը թույլ կտա փոխանակել կուտակած փորձը, քննարկել արդի հիմնախնդիրները, գտնել տարբեր երկրների դասախոսների առջև ծառացած խնդիրների ոչ ստանդարտ լուծումները ժամանակակից աշխարհում:

Գիտաժողովը վարում էր Լեզուների ամբիոնի պետի ժամանակավոր պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Գալինա Ռուսակովան:

Զեկույցներում ներկայացվեցին լեզվի և խոսքի ուսուցման, ինչպես նաև իրավաբանների հաղորդակցման ունակությունների բարելավման հիմնախնդիրները, ուսանողների ներուժը զարգացնելու նպատակով մանկավարժական մոտեցումները, կրթական համակարգում դիտարկվող ժամանակակից նորարարական տեխնոլոգիաները, քննարկվեցին դասավանդման, լեզվի ուսուցման որակի բարձրացմանն ուղղված արդի հիմնախնդիրները: Անդրադարձ կատարվեց նաև մասնավոր առարկայական հիմնահարցերին:

Գիտաժողովի շրջանակներում տրամադրվեց «Երիտասարդ գիտնականի հարթակը», որտեղ ուսանողները կարող էին ներկայացնել իրենց գիտական զեկույցները, հետազոտությունները, ղեկավարների հետ համատեղ արված վերլուծությունները:

Միջազգային գիտամեթոդական համաժողովն անցավ բարեկամական ջերմ մթնոլորտում, իսկ զեկույցներն արժանացան մեծ հետաքրքրության և բովանդակալից քննարկման:

ՄԱՐՏԻ 8-Ը ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Վերջապես եկավ երկար սպասված գարնանային զարթոնքը՝ իր հետ բերելով նոր եռանդ, ոգևորություն, նպատակներ և անելիքներ:

Գարնանային գեղեցիկ տոնի՝ Մարտի ութի կապակցությամբ Կրթահամալիրում կազմակերպվել էր տոնական համերգ, որում ելույթ ունեցան ՀՀ վաստակավոր արտիստ Արսեն Գրիգորյանը (Մրո), էստրադային երգչուհի Լայանան, Ռոմանոս Մելիքյանի անվան պետական քոլեջի սաները, (Կառնավալ) պա-

▶ 2

ԴԱՏԱԽԱՂ՝ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Մարտի 24-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նստավայրերից մեկում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ի.գ.թ, դոցենտ, ոստիկանության կապիտան Գայանե Մարուքյանը և նույն ամբիոնի դասախոս, ոստիկանության կապիտան Լուսինե Թասալյանը կազմակերպել էին քաղաքացիական իրավունքի դատախաղ-մրցույթ, որին մասնակցում էին Ակադեմիայի առկա անվճար 2-րդ կուրսի սովորողներ Նաիրի Զիլաբյանը, Անգելինա Հովհաննիսյանը, Անի Գրիգորյանը, Կարեն Կարապետյանը, Ժաննա Տեփանոսյանը, առկա վճարովի 2-րդ կուրսի սովորողներ Արգիշտի Բաբայանը, Ավետ Ավետիսյանը, Նվեր Ստեփանյանը, Լիլիթ Դավթյանը, Արփինե Մանգասարյանը և Լալա Գինոսյանը:

Դատախաղն անցկացվել էր երկու փուլերով՝ գրավոր և բանավոր: Գրավոր փուլի համար կողմերին նախապես տրված գործի հիման վրա նրանք պետք է պատրաստեին հարց ու պատասխան, որը պետք է գնահատվեր անկողմնակալ դատավորների կողմից:

Գրավոր արդյունքների ամփոփմամբ հաղթող ճանաչվեց առկա վճարովի երկրորդ կուրսի թիմը:

Բանավոր փուլում թիմերն արդեն պայքարում էին լավագույն թիմի և լավագույն բանախոսի մրցանակի համար: Գնահատումն իրականացնում էին առկա վճարովի երրորդ կուրսից ընտրված երեք արբիտրներ Ասմարե Սարգսյանը, Ռուզաննա Պողոսյանն ու Դիանա Գրիգորյանը: Կողմերի բանավեճը ծավալվեց նախապես տրված գործի շրջանակներում իրենց դիրքորոշումը ներկայացնելու, ինչպես նաև փոխադարձ հարցուպատասխանի և արբիտրների հարցադրումների շուրջ իրենց տեսակետը ներկայացնելու ձևաչափով:

Արդյունքում հաղթող ճանաչվեց առկա անվճար 2-րդ կուրսի թիմը՝ թիմի ավագ Նաիրի Զիլաբյանի գլխավորությամբ, իսկ լավագույն բանախոսի մրցանակին արժանացավ առկա անվճար երկրորդ կուրսի սովորող Անի Գրիգորյանը:

Դատախաղի ավարտին կազմակերպիչները գրավոր, բանավոր փուլերում հաղթող թիմերին և լավագույն բանախոսին մրցանակներ հանձնեցին:

ՊԵՏԱՀԻՐԱՎԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԸ



2023 թվականի մարտի 17-ին տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ու վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոններին կից գործող պետահիրավական առարկաների գիտական խմբակի 2022-2023 ուստարվա երկրորդ նիստը:

Նիստին ներկա էին Կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի պետի պարտականությունները կատարող, ոստիկանության փոխգնդապետ Ա. Սաֆարյանը, նույն ամբիոնի դասախոս, ոստիկանության մայոր Ա. Մարգարյանը, վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի պետ, ի.գ.թ, ոստիկանության մայոր Գ. Խուդոյանը, նույն ամբիոնի ուսումնական ասիստենտ, ոստիկանության կապիտան Ա. Կիրակոսյանը, ՈՒՄ միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի տեսուչ, ոստիկանության կապիտան Ա. Ղուկասյանը, կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժնի տեսուչ, ոստիկանության կապիտան Ն. Վարդանյանը:

Գիտական խմբակի նիստի թեման էր «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման սահմանադրական հիմքերը»: Նշված թեմայով գիտական զեկույց ներկայացրեց Կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի 2-րդ կուրսի սովորող Նաիրի Զիլաբյանը: Սահմանադրությամբ նախատեսված համաչափության և որոշակիության սկզբունքների մեկնաբանման համատեքստում վերջինս ներկայացրեց մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման կառուցակարգերն ու ընթացակարգերը: Բանախոսն անդրադարձավ միջազգային իրավական պրակտիկային՝ առանձնացնելով քննարկվող հիմնախնդրին վերաբերող կարևոր հարցադրումները:

Զեկույցին հաջորդեց միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի տեսուչ, ԱՄՆ ՀԴԲ ազգային ակադեմիայի շրջանավարտ, ոստիկանության կապիտան Անի Ղուկասյանի ելույթը: Նա ներկայացրեց համայնք-ոստիկանություն փոխհարաբերության որոշ առանձնահատկությունները ՀՀ-ում և ԱՄՆ-ում, համայնքի բազմազանությանը վերաբերող իր դիտարկումները: Մասնակիցները դերային խաղերի միջոցով փորձեցին պարզել համայնք-ոստիկանություն հարաբերությունները խոչընդոտող հանգամանքները հաղթահարելու, համագործակցությունն է՛լ ավելի ամրացնելու ու զարգացնելու հնարավորությունները: Բուռն քննարկումներից ու մտքերի, կարծիքների փոխանակումից հետո հանդիպումն ամփոփվեց «ԱՄՆ ոստիկանների փորձը բազմազան համայնքների հետ շփվելիս» թեմայով վավերագրական ֆիլմի դիտմամբ:

ՄԱՐՏԻ 8-Ը ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

1 ◀ ռային համույթի պարողները և Կրթահամալիրի սովորողները: Այն կազմակերպել էր Կրթահամալիրի կադրերի և ԱՀՏԱ բաժնի ակումբի առաջատար մասնագետ Լ. Սահակյանը:

ՀՀ ՆԳՆ և ոստիկանության կրթահամալիրի ղեկավարությունը մշտական ուշադրության կենտրոնում է պահել և պահում կին աշխատակիցներին՝ իրենց ցուցաբերած նվիրումի և պատասխանատու աշխատանքի համար:

Անմասն չի մնացել նաև ՀՀ ՆԳՆ արիմիությունը՝ ի դեմս արիմիության նախագահ Գայանե Մելիք-Քարամյանի, ով, հանձնելով տրամադրված նվերները, հանդիսավոր միջավայրում իր շնորհավորական խոսքն ու ջերմագին մաղթանքներն ուղղեց աշխատակցուհիներին՝ մաղթելով բարօրություն, սեր, կանացի երջանկություն, առողջություն, նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ անձնական կյանքում և աշխատանքում և ամենակարևորը՝ խաղաղություն բոլորի ընտանիքներին և մեր հայրենիքին:

Միջոցառման ավարտին խոսքով հանդես եկավ Կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մ. Մուրադյանը. շնորհավորելով կանանց ու աղջիկներին՝ մաղթեց երջանկություն, հաջողություններ անձնական կյանքում և ընդգծեց, որ ոստիկանությունում ծառայող կանայք պետք է միտված լինեն հաջողության հասնելու բացառիկ ձգտմանը:

Միջոցառումն անցավ ջերմ և անկաշկանդ մթնոլորտում:

ՕՐԵՆՔԻ ԱՊԱԳԱ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ ՀՄՈՒՏ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆՆԵՐ ԵՆ

պատառիկներ սովորողների փիլիսոփայական մտորումներից ժամանակակից հայ գրողների ստեղծագործությունների վերաբերյալ

Հիշեցնենք, որ այս խորագրի տակ «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի դասընթացի շրջանակում ներկայացնում ենք իրենց մտքի սրությամբ, ստեղծագործական մեկնաբանություններով աչքի ընկնող սովորողների՝ ժամանակակից հեղինակների ստեղծագործությունների վերլուծությունները: Այս անգամ «Իրավագիտություն» ֆակուլտետի առաջին կուրսի սովորող Եվգենյա Գևորգյանն է անդրադառնում 20-րդ դարավերջի հայ արձակագիր Ռուբեն Ֆիլյանի «Գնացքը շարժվում է» պատմվածքի գաղափարական առանձնահատկություններին:

***

Գիտությունը դեղամիջոց է հորինել մեր հիվանդությունների մեծ մասի համար, բայց երբեք չի գտել բուժում դրանցից ամենասարսափելիի՝ անտարբերության համար: Այս վերլուծության մեջ քննարկում ենք 21-րդ դարի հայ արձակագիր Գրիգի «Պուճուր մարդը» պատմվածքը՝ անդրադառնալով դրա բովանդակային, գաղափարական, կառուցվածքային և պատկերավորման առանձնահատկություններին:

Պատմվածքը մի ուսանողի մասին է, որը պատահաբար հանդիպում է աղքատ արվեստագետի: Վերջինիս նկարներն այնքան պարզունակ և մանկական են թվում տղային, որքան դրանց հեղինակը: Արվեստագետի հետ շփման ընթացքում ուսանողը նկատում է բնավորության գծեր, որոնք հատուկ չեն մարդկանցից շատերին (համբերատարություն, գթասրտություն): Պատմվածքն ավարտվում է արվեստագետի խելագարությամբ և մահվամբ: Մահվան պատճառն աղքատությունն ու սովն էր, բայց ոչ նյութական աղքատությունը: Մեր հասարակությունը գտնվում է ծայրահեղ աղքատության մեջ: Մեր հոգին է աղքատացել՝ չունենալով բավարար սեր, հոգատարություն, կարեկցանք. դրա փոխարեն մենք հարուստ ենք չարամտությամբ, ցավով ու գորշությամբ, և այս ամենը բերում է ամենասարսափելիին՝ անտարբերությանը, որը մեր ձեռքում դառնում է մարդկային հոգիներ սպանող զենք: Մենք ամեն օր տեսնում ենք մարդկանց, ոմանց հետ շփվում, ոմանց չենք էլ նկատում: Գուցե նրանք փոքր են նկատվելու համար, կամ գուցե այդ մենք ենք փոքր նման մեծություն տեսնելու համար: Նյութական արժեքներն ամպերի պես ծածկել են մեր միտքն ու կյանքը, և մենք չենք էլ ուզում նկատել, թե այդ լուսավոր ու վառ ամպերի հետևում ինչ կյանքեր կան: Ես մեծ ցավ եմ ապրում, որ «պուճուր» մարդիկ, ապրելով մեր կողքին, մատնվում են անտարբերության:

Պատմվածքի սյուժետային զարգացումները դինամիկ են, բալանսավորված են և՛ հեղինակի խոսքը, և՛ երկխոսությունները: Գերակշռում է առօրյա-խոսակցական բառապաշարը: Պատկերավորման միջոցներից հեղինակն օգտագործել է փոխաբերություն, մակդիրներ: Չնայած օգտագործված չեն պատկերավորման շատ միջոցներ, սակայն ես կարողացա ապրումակցել հերոսներին: Ինձ դուր եկավ պատմվածքը, քանի որ այն ոչ բացահայտ կերպով, այլաբանորեն երևան է հանում հասարակության արատները:

Եվգենյա Գևորգյան
իրավագիտության ֆակուլտետ,
առաջին կուրս

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ ՀՕՖ-Ի ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Մարտի 21-ին Հայաստանի օգնության ֆոնդի (ՀՕՖ) երեխաների աջակցության կենտրոնում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի դոցենտ, ոստիկանության գնդապետ Ա. Սահակյանը, ՀՀ ոստիկանության ՀԱԱԳՎ-ի ԱՀ և ԸԲԿ վարչության ՀԿՀ ավագ տեսուչ, ոստիկանության փոխգնդապետ Հ.Ալեքսանյանը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի միջին մասնագիտական կրթության 2-րդ կուրսի սովորողների հետ անցկացրին «Ընտանիքում բռնության և անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների կանխարգելումը» դասընթացի արդեն պարբերական դարձած հերթական գործնական պարապմունքը:

Գործնական պարապմունքի ժամանակ սովորողներին ներկայացվեցին այն հանգամանքները, որոնք պատճառ են դառնում ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնում անչափահասների հայտնվելուն: Դրանք առավելապես ընտանիք չունեցող, անապաստան, լքված, մուրացկանությամբ զբաղվող կամ բռնության ենթարկված երեխաներ են, որոնք նաև ունեն վարքագծի շեղումներ: Սովորողների ուշադրությունը հրավիրվեց այն հանգամանքի վրա, որ կենտրոնում տրամադրվում են տարբեր ծառայություններ՝ ոստիկանության իրավական և շտապ արձագանքման ծառայություն, բուժօգնություն, հոգեբանական աջակցություն, հակասթրեսային թերապիա և այլն: Կենտրոնի երեխաների հետ շփվելիս սովորողներն ամրապնդեցին երեխայի հետ հաղորդակցման որոշակի հմտություններ, որոնք ձեռք են բերվել «Ընտանիքում բռնության և անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների կանխարգելումը» մոդուլի դասավանդման ընթացքում:

Սովորողները տեղում համոզվեցին ոստիկանության ծառայողի՝ տվյալ գործընթացում ունեցած առանցքային դերակատարման մեջ:

ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 113 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԵՎ 90 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

2023 թ. մարտի 14-ին և 16-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիր էին այցելել Երևանի թիվ 113 միջնակարգ և 90 հիմնական դպրոցների աշակերտները՝ դպրոցի զինղեկների՝ Ա. Մկրտչյանի, Գ. Աբրահամյանի, դասղեկ Շ. Եգորյանի, պատմության ուսուցչուհի Կ. Հայրապետյանի և Մալաթիա վարչական շրջանի ոստիկանության վետերանների խորհրդի նախագահ Վ. Եղիազարյանի ուղեկցությամբ:

Դպրոցի աշակերտներն այցելեցին Կրթահամալիրի ակումբ, որտեղ առաջատար մասնագետ Լ. Սահակյանը տեղեկացրեց ոստիկանների շրջանում տարվող մշակութային միջոցառումների մասին: Այնուհետև թանգարանի առաջատար մասնագետ Դ. Հովսեփյանը ծանոթացրեց Կրթահամալիրի տարածքին, հուշակո-թողներին և ներկայացրեց Կրթահամալիրի զարգացման փուլերը՝ սկսած 1966 թվականից:

Թանգարանում Դ.Հովսեփյանը ներկայացրեց հնագույն ժամանակաշրջանից մինչև մեր օրերն ընկած հայ ժողովրդի պատմությունը և այդ ընթացքում ոստիկանության կատարած հայրենանվեր աշխատանքները հանցավորության դեմ պայքարում:

Այցի ավարտին աշակերտները տպավորված և գոհունակությամբ ամփոփեցին հանդիպումը՝ մաղթանքներ գրառելով «Պատվավոր հյուրերի» գրքում:

ԳԱՐՈՒՆ՝ ՍԻՐՈ ԵՂԱՆԱԿ

Գարուն եմ ուզում՝ իմ սիրո եղանակը, երբ հոգիս էլ է ծաղկում, ու ինչ-որ անծանոթ հուզմունք եմ զգում: Ահա և գարունը եկել է՝ իր հետ բերելով ժպիտ, խնդություն, սեր ու քնքշություն... Գարնանային բույր ու շունչ կա օդում: Գարունը սեր է, գարունը հոգու երգ է, կյանք է, տաք քամի, բարի՛ քամի: Գարնան հետ եկած կանանց տոնն ամբողջացրեց սիրո, կարոտի, քնքշանքի, զարթոնքի ու պտղաբերության, վերածննդի ու հավերժության խորհուրդը: Գեղեցկության, մեղմության, սիրո, քնքշանքի տոնը ոստիկանությունում ծառայող կանանց համար նաև ուժի, հպարտության, հայրենասիրության ու քաջության տոն է: Գարնանային այս գեղեցիկ տոնը պատեհ առիթ է սիրո, երախտիքի և մեծարման խոսքեր հղելու մեր մայրերին, քույրերին, կանանց ու դուստրերին: Սիրելի՛ կանայք, ձեր սիրառատ հոգու ջերմությամբ նորոգվում ու ապաքինվում են ձեր հարազատների սրտերը, ինչպես բնությունը՝ գարնան արևի ջերմությամբ:

Գարնան շոյանքով ամբողջ բնությունն արթնացել է խոր քնից, ու ձյան սավանի տակից ծլարձակել, իր նրբիկ գլուխն է նազանքով բարձրացրել գարնան խորհրդանիշը՝ ձնծաղիկը, ծնվել են նոր կյանքեր, սակայն, ցավո՜ք, հայոց աշխարհի գարունները նաև արյունոտ են եղել, բնության զարթոնքի հետ օդում լսվելով թնդանոթի որոտը ու վառոդի հոտը՝ ընդհատվել են մատաղ, ծիլ տված բազում կյանքեր՝ չհասցնելով գարնանային գեղեցիկ տոնի առթիվ շնորհավորել իրենց մայերին, քույրերին ու սիրելիներին:

Այսօր Ձեր փոխարեն, հերո՛ս տղաներ, մենք ենք նրանց մեծարում: Առանձնահատուկ գնահատանք և խոնարհում՝ հերոսներ ծնած և դաստիարակած մեր մայրերին: Դուք թանկ եք մեզ համար տարվա բոլոր օրերին, իսկ այս տոնը պարզապես գեղեցիկ առիթ է՝ արտահայտելու մեր սերն ու հիացմունքը, մեր հարգանքն ու երախտագիտությունը Ձեր նկատմամբ: Ձեր հերոս որդիների շնորհիվ է, որ հայոց աշխարհի գարունները հայերեն են գալիս, ձյունները հայերեն են լալիս, հայերեն են հորդում հայոց գետերը:

Մեր սիրելի՛ կանայք և աղջիկներ, շնորհավորում ենք ձեզ գարնանային միամսյակի կապակցությամբ: Ձեզանից յուրաքանչյուրին մաղթում ենք մեծ սեր, երջանկություն և գործնական հաջողություններ, միշտ եղեք սիրված և սիրե՛ք, քանի որ կյանքը գույներ է ստանում միայն սիրո մեջ, թող Ձեր կյանքում գարունները գան ու չգնան:

Գարունը մտածող մարդկանց համար խորհելու, արարելու, ստեղծագործելու եղանակ է, որը մղում է դեպի նորից նորացող կյանք՝ ծաղկելու և վերսկսելու համար: Ուստի գարունը ծաղկեցնում է և՛ բնությունը, և՛ մարդու միտքն ու հոգին: Գարունը նոր ու պայծառ կյանքի սկիզբ է:

Բնությունն ամեն տարի ինչպես մատյան բացվում է բոլոր մարդկանց առջև, որպեսզի նրանք տեսնեն արարչագործության հրաշքը, Նորոգեն իրենց սիրտն ու հոգին և գարնան հետ լուսավորվեն, դառնան պայծառ, մաքրվեն քեներից, անախորժ տրամադրությունից, միմյանց հանդեպ լցվեն անկրկնելի, անբացատրելի սիրով, քանզի գարունն իր ջերմությամբ հալեցնում է ոչ միայն սառույցը, այլ նաև մարդկանց սառած սրտերը: Գարնան ծաղկանց կախարդական բույրերը մարդկանց ազատում են չարից, տկարությունից, նախանձից, իրենք էլ չեն զգում, թե ինչպես են անկախ իրենցից դառնում բարի, հանդուրժող ու սիրառատ: Այսպիսով՝ կարելի է ասել, որ գարնան գալն ու գնալը բնության դասերի կրկնություն են. չէ՞ որ մեր կյանքն էլ իր եղանակներն ունի՝ սկսած գարունքից, մինչև աշուն ու ձմեռ. խորհե՛նք այդ մասին, որպեսզի չարության գիրկը չընկնենք: Այլ խոսքով՝ գարունն իր հետ պատգամ ունի, կյանքի պատգամ, վերապրելու և վերանայելու պատգամ: Գարունը մեզ կոչ է անում ճանաչել մեզ: Եկեք գարնանը նաև գարնանային դարձնենք մեր գաղափարները: Հնարավոր չէ կրկնել բնության գարունը, բայց միշտ և ամենուրեք կարելի է կրկնել մտքի ու սրտի գարունը: Այն մարդիկ, ովքեր անընդհատ գարուններ են ստեղծում իրենց հոգում ու սրտում, նրանք միշտ գարնան պես պայծառ են, կենսուրախ ու խանդավառ: Մարդը թեև բնությունից է դաս առնում, բայց բնությունից վեր է բարձրանում: Բնության մեջ գարունները գալիս են, բայց անդարձ չեն գնում, իսկ մեր կյանքի բոլոր եղանակներն էլ մեկ անգամ ենք ապրում, ուրեմն, ինչու՞ չապրել գեղեցիկ, արարել բարիք, սերմանել սեր ու ջերմություն. չէ՞ որ մեզանից հետո թողնելու ենք միայն հիշողություն...

Գարուն եմ ուզում՝ իմ սիրո եղանակը...

Աննա Սարուխանյան
ոստիկանության մայոր

ՆՊԱՏԱԿԸ՝ ՁԵՎԱՎՈՐԵԼ ԳՐԱԳԵՏ ԲԱՆԱՎԻՃԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆ

Կայացավ Կրթահամալիրի սովորողների բանավեճի ակումբի առաջին բանավեճը, որի թեման էր «Հայաստանի Հանրապետությունում պետք է վերականգնել մահապատիժը՝ որպես առավելագույն պատժամիջոց»: Միմյանց հետ բանավիճեցին «Կողմ» և «Դեմ» թիմերը, որոնց մասնակիցները վիճակահանությամբ ընտրվել էին Ակումբի հիմնական անդամներից:

«Կողմ» թիմի դիրքորոշման գործառույթներն էին՝ ներկայացնել սեփական դիրքորոշումը, հիմնավորել դրանք ապացույցների միջոցով, իսկ «Դեմ» թիմի դիրքորոշման գործառույթներն էին՝ հակադրվել հակառակորդ թիմին, ներկայացնել սեփական դիրքորոշումն ամրապնդող համոզմունքներ:

Թիմերը մեծ ճիգ գործադրեցին իրենց տեսակետը պաշտպանելու համար. ելույթներն այնպես կառուցեցին, որ լավագույնս բացատրեն իրենց դիրքորոշումը և լսարանի ու դատավորների համար այն ավելի համոզիչ դարձնեն:

Բանավեճի դատավորները, որոնց որոշումները որևէ կերպ կախված չէին թեմայի նկատմամբ նրանց անձնական վերաբերմունքից, գնահատման չափորոշչի հիման վրա որոշեցին հաղթող թիմին: Միավորների աննշան տարբերությամբ հաղթեց «Դեմ» թիմը:

Կրթահամալիրի սովորողների բանավեճի ակումբի ղեկավար, ոստիկանության փոխգնդապետ Հ. Քեշիշյանի կարծիքով՝ բանավեճն ստացվեց, այն ծառայեց իր նպատակին, այն է՝ սովորողներին հաղորդակից դարձնել հռետորական արվեստին, նրանց մեջ զարգացնել գրագետ բանավիճելու հմտություններ և ձևավորել թիմի մասնակիցների միջև փոխհամագործակցելու ունակություններ:

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Դեռ հնուց ի վեր հային իր պատիվն ու արժանապատվությունն է առանձնացրել մյուս ազգերից: Այն ուղին, որն անցնում է հայ ազգը, բարդ է, պայքար՝ հանուն պետականության և հավատքի:

Ինքս մարտական ուղի ունեմ անցած և միայն այդ ժամանակ հասկացա, թե ինչքան հարուստ եմ, որ ունեմ ազգ, պետականություն, հասցե: Ցանկացա ծառայությունս շարունակել ոստիկանությունում, քանզի ինչ կատարում է ոստիկանը, պարզ պարտականություն չէ, այլ դժվարին ու պատվաբեր աշխատանք և ծառայություն, որն ուղղակի և անուղղակի առնչվում է մեր երկրի ու ժողովրդի թե՛ ներկային և թե՛ ապագային: Նա արժանապատվորեն և նվիրվածությամբ է կատարում երկրում սահմանադրական և հասարակական կարգի պահպանությունը՝ օրինապահության ամրապնդման այդ առաքելությունը: Եվ կարծում եմ, որ ուսադիր կրող մարդը պետք է գիտակցի իր բաժին պատասխանատվությունը: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մեր բոլոր զինվորականներից և ոստիկաններից, ովքեր իրենց կյանքի երիտասարդության լավագույն տարիները նվիրում են պետականաստեղծ, պատվի արժանի այս գործին:

էդգար Դալլաքյան
ակադեմիա առաջին կուրս,
ոստիկանության կրտսեր սերժանտ

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ ՄԱՐՏԻ 8-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարտի 8-ի առավոտյան արթնանալով՝ կինը երազկոտ ձգվելով ասում է ամուսնուն.

- Գիտե՞ս՝ ինչ հրաշալի երազ եմ տեսել: Իբր Մարտի 8-ի առթիվ դու ինձ նվիրում ես ադամանդե մատանի: Տեսնես ի՞նչ է նշանակում այս երազը:

- Երեկոյան կիմանաս,- խորհրդավոր ժպտալով՝ ասում է ամուսինը:

Կինը երեկոյան զարդարում է տոնական սեղանը, վառում ռոմանտիկ մոմերը... Ամուսինը գալիս է տուն և նույն խորհրդավոր ժպիտով նրան մեկնում կարմիր ժապավենով մի գեղեցիկ տուփ: Կինն անհամբեր բացում է տուփը, իսկ այնտեղ ընդամենը գիրք է՝ «Երազահան»:

***

- Սիրելի՛ս, դու չքնաղ ես, ինչպես այս ծաղիկները:

- Իսկ ես մտածում էի, որ չքնաղ եմ, ինչպես ոսկե ապարանջանը...

- Չէ՛, սիրելի՛ս: Դու չքնաղ ես այս ծաղիկների պես:

***

- Հայրի՛կ, իսկ ինչու՞ է Մարտի 8-ը օրացույցում կարմիր գույնով ներկված:

- Տղա՛ս, դա մեր՝ տղամարդկանց արյան գույնն է:

***

Պարզվում է մարտի 8-ը հորինել են ծաղիկ վաճառողները, իսկ ամբողջ մեղքը բարդել են Կլարա Ցետկինի վրա:

***

- Սիրելի՛ս,ի՞նչ նվիրեմ քեզ վաղը:

- Օ՜, ես նույնիսկ չգիտեմ:

- Դե ոչի՛նչ, դեռ մեկ տարի ունես մտածելու համար:

***

- Նվիրի՛ր ինձ մարտի 8-ին մի այնպիսի բան, որ ոտքով թեթև սեղմեմ, և սլաքը միանգամից 0-ից հասնի 100-ի:

- Կշեռք ե՞ս ուզում:

***

Ինչո՞վ են տարբերվում հայ տղամարդիկ հայ կանանցից.

Եթե հանկարծ հայ կինը տանը չի գիշերում՝ ասելով, թե ընկերուհու տանն էր, և ամուսինը զանգում է կնոջ ամենամոտ 10 ընկերուհիներին, պարզվում է՝ ոչ մեկի տանը կինը չի գիշերել:

Իսկ եթե ամուսինը տանը չի քնում՝ ասելով, որ ընկերոջ տանն էր, և կինը զանգում է ամուսնու 10 ամենամոտ ընկերներին, տասից ինը ասում են, որ իրենց տանն է գիշերել, իսկ մեկն ասում է, թե մինչ հիմա էլ իրենց տանն է. նստած՝ նարդի են խաղում...

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

1. Ո՞ր Եվրոպական մայրաքաղաքն է առաջացել նույն գետի տարբեր ափերին գտնվող երկու քաղաքների միաձուլումից:

***

2. Ավարտե՛ք հայտնի արտահայտությունը՝ «Ոչինչ մեզ այդքան էժան չի տրվում և այնքան թանկ չի գնահատվում, որքան...»

Նախորդ համարում զետեղված հարցերի պատասխանները

1. Աղջիկը նստած է տղայի ծնկներին:
2. Պատի այն կողմում բարձր խռմփացնում էր հարևանը, որ արթնացավ հարևանի զանգից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ներքին գործերի նախարարության ձևավորմամբ պայմանավորված՝ առաջիկայում նախատեսվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի և Ճգնաժամային կառավարման ակադեմիայի բազայի հիման վրա ՆԳՆ կրթահամալիրի ստեղծումը:

ՆԳՆ կրթահամալիրում ուսուցումն իրականացվելու է նոր կրթական ծրագրերով, ներքին գործերի նախարարության ենթակա մարմինների կադրային պահանջարկին համապատասխան:

Այդ պատճառով ՀՀ ոստիկանության կրթահամալիրը չի իրականացնելու 2023-2024 ուսումնական տարվա բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով «Իրավագիտություն» մասնագիտությամբ (առկա և հեռակա, անվճար և վճարովի) ընդունելություն:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը 2023-2024 ուսումնական տարում ընդունելությունն իրականացնելու է նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրերով «Ոստիկանական գործ» մասնագիտությամբ:

Ընդունելության կարգն ու պայմանները կհրապարակվեն հետագայում:

Ստեղծագործում են մերոնք

ԵՍ ԵՐՋԱՆԻԿ ԵՄ

Ես երջանիկ եմ, որ ձայնում եմ՝ մա՛մ,
Ու պատասխանում ես այնքա՜ն հաճելի:
Ես երջանիկ եմ, որ հոգնած մարմնիս
Քո մի համբույրով նոր ուժ ես տալիս:
Ես երջանիկ եմ, որ բոլորից զատ
Դու հավատում ես իմ ապագային:
Ես երջանիկ եմ, որ քո խոսքերով
Ինձ դնում ես միշտ ճիշտ ճանապարհի:
Եվ երջանիկ եմ այն բանի համար,
Որ այս աշխարհին թե տիրի քաոս,
Ես, քո ջերմ գրկում հանգրվան գտած,
Պիտի խոր քնեմ հանգիստ, ապահով:

Վիկտորյա Մարգարյան
ակադեմիայի իրավագիտության
ֆակուլտետի շրջանավարտ

ՄՈՐՍ

Որքան ապրեմ այս աշխարհում,
Պետք է գովեմ երանելի
Գոյությունդ իմ օրերի:
Իմ սու՛րբ, բար՛ի ու անթեր՛ի...
Ներո՛ղ, սիրո՛ղ ու համբերո՛ղ,
Իմ մա՛յր, չքնա՛ղ աստվածուհի:
Էությունդ ինձ սնուցող,
Ուղեցույցն իմ օրերի թող որ լինի
Սիրով լեցուն, խնդությամբ լի:

Գրետա Ալեքսանյան
ակադեմիայի իրավագիության
ֆակուլտետի շրջանավարտ

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «ՁԱՆԳԱԿ» հրատարակչության տպարանում
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 30.03. 2023թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան